

ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՅԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայկական հարցը դիպլոմատիական տեսակետից կարծեք մտել է իւր քարացման շրջանի մէջ. մի քանի ամիս առաջ այդ յուզող ու երկիրը պատճառող խընդիրը, այսօր կարծեք մոռացութեան է տաճ, ոչ ձայն, ոչ ծպտուն: Հայկական հարցը, որ ամբողջ աշխարհը մի քանի անգամ դղողացրել է, որ հարիւր հազար զոհ է արել, ուզում են թաղել, այդ երբէք չի յաջողել թաղել Հայկական հարցը, այդ կը նշանակէ թաղել հայ ժողովուրդը, և ո՞րն է այն գերբնական ոյժը, որ իւր հարաճով կարող է մեռցնել կենսականութիւնով լի հայ ժողովուրդը:

Մենք շատ լաւ դիտենք, որ այդպիսի դիտումներ կան. այս դիպաճում մենք չենք խօսիլ սուլթանի կառավարութեան մասին, այդ աւելի քան պարզ է: Բայց մենք մատնացոյց կը լինենք սուլթանի կառավարութեան ընկերակցի վրայ, որը հայ ժողովուրդի վերաբերմամբ նոյն քաղաքականութիւնն ունի, ինչ որ ինքը՝ սուլթանը. տարբերութիւնը միայն կայանում է միջոցների աւելի կամ պակաս բիրդ լինելուն մէջ. այդ ցարի կառավարութիւնն է:

Ցարի կառավարութեան քաղաքական դիտումներն ու ձգտումները յայտնի են. Պետերբուրգը վաղուց իւր աչքը յառել է Պոլսի վրայ և իւր այդ նպատակին հասնելու համար, նա միշտ օգտուել է սուլթանի կառավարութեան վայրենի բարբարոսութիւնից՝ քայքայելու Օսմանեան պետութիւնը՝ Բոսնիոյի գահը բարձրացնելու նրա աւերակների վրայ, սլաւոն ու քրիստոնեայ ժողովուրդների պաշտպանութիւնը պատրակ բռնելով ուրիշ խօսքով, ցարի կառավարութիւնը իւր քաղաքական նպատակների համար՝ Բիւզանդիոնի համաշխարհային պետութիւն դառնալու և ամբողջ աշխարհին «կնուտով» (մտրակով) կառավարելու համար, կեղեքում է «քաղաքակրթւած մարդկութեան» ազգայնութեան և կրօնի հասկացողութիւնները, ծառայիցնելով նրանց իբրև զէնք, իբրև միջոց: Եւ ցարի կառավարու-

թիւնը երբէք զանց չէ առել ոչ մի դէպք իւր այդ ցնորամիտ նպատակին հասնելու համար: Միւս կողմից Եւրոպական միւս պետութիւնները միշտ արգելք են եղել ցարի կառավարութեան այդ ոտնաձգութիւններին, մասնաւորապէս Անգլիան, ներկայ Ռուսիայի քաղաքականութեան երգւեալ թշնամին, պահպանելու գոյութիւն ունեցող քաղաքական ոյժերի հաւասարակշռութիւնը, անկարող լինելով ընդհանուր համաձայնութիւն կայացնել «կնուտի կառավարութեան» կնուտով դասեր տալ: Դեռ այս բաւական չէ, մենք տեսնում ենք, որ մի քանի պետութիւններ նրա բարեկամութիւնն են փնտռում, մենք այսօր հանդիսատես ենք այն տեսակ քաղաքական կոմբինացիաների, որոնք կարող են միայն ամօթ ունախատիւք բերել Եւրոպային, մանաւանդ 1789 թ. 1793 թ. 21 յունւարի, 1848 թ. 1870-71 թ. Փրանսիային, որին է պարտական իւր ներկայ դիպլոմատիական յաջողութիւններով ցարի կառավարութիւնը: Բայց թողնենք պատմական այդ դառն երևոյթը, այլապէս նա մեզ հեռու կը տանի, և դառնանք մեր խնդրին:

Օսմանեան պետութեան պատմական ռեսերվ թշնամին այժմ նրա բարեկամը ու հովանաւորողն է, և, մինչև իսկ, հայկական սարսափի մէջ, նրա խրախուսողը: Պատճառները հասկանալի են: Չնայած որ ցարի կառավարութիւնը այժմ դիպլոմատիական տեսակետով աւելի յաջող պայմանների մէջ է գտնուում քան մի որ և է եւրոպական կառավարութիւն, բայց և այնպէս նա ոչ մի հնարաւորութիւն չունի ներկայումս օգտուելու հայկական «խառնակութիւններից»: Ներքին մի քանի խնդիրներ, ֆինանսական վիճակը, ծայրագոյն արեւելքում տեղի ունեցող քաղաքական դէպքերը, նրանից պահանջում են «սպառնացող տակտիկայ չբռնել» սուլթանի կառավարութեան վերաբերմամբ: Բայց մինչդեռ հայկական խնդիրը լուրջ բնաւորութիւն է առել շնորհիւ յեղափոխական շարժումների և այսօր միջազգային քաղաքական խնդիր է, քանի որ եւրոպական 6 պետութիւնները միջամտում են այդ հարցում, և, ի՞նչ արսպէս շարունակել, նա կարող է ցարի կառավարութեան շահերը վտանգի է ենթարկել, կարող է Ցաճկահայաստանից բարձրանալ այնպիսի մի պատնէշ, ինչպիսին եղաւ Բալկանեան թերակղզու վրայ, եւ եթէ խնդիրը այդ բնաւորութիւնն ստացաւ, պատերազմի վտանգ է

առաջ գալիս, մի բան, որ ներկայումս բոլորովին ցանկալի չէ ոչ միայն Ռուսիային, այլև Անգլիային, ինչպէս և ամբողջ Եւրոպային: Այս մասին խօսած լինելով Տարկ չենք համարում վերադառնալ նրան: Այսպէս լինելուց յետոյ, հասկանալի է, որ Ռուսիան պիտի աշխատի ոչնչացնել այդ ծրագրի՝ պատնէշի իրականացումը արգելքներ հանելով և ահա նա դիմում է իւր տրամադրութեան տակ ունեցած միջոցներին:—

Հենց սկզբից, երբ նա Անգլիայի առաջարկութեամբ Քրանսիայի հետ միասին ձեռք առին Հայկական խընդիրը, հենց սկզբից նա միշտ երկդիմի, նենգամիտ դիրք բռնեց և ամեն կերպ աշխատում էր հարցը ի վնաս հայ ժողովրդի լուծել: Եւ իւր այդ նպատակի համար, նա ամենակերպոտ, ամենաստոր մանեօվրաններ է անում Բօսֆօրի ամերում ու Ելդիզի պալատում: Հենց այն ժամանակ, երբ Տաճկահայաստանի կոտորածը իւր ամենաբարձր կէտին է հասնում, որ կարող էր առաջացնել ամենալարած մտանգաւոր քաղաքական դրութիւն՝ եթէ դիպլոմատիան ամբողջ ուշադրութիւնը այդ կէտի վրայ յառած լինէր, ահա նա մի ճարպիկ խաղով կարողանում է դիպլոմատիայի ուշադրութիւնը հեռացնել սպանդանոց դարձած դժբախտ երկրից, նըրան զբաղեցնելով երկրորդ պահականաւի խնդրով: Եւ այս ոչ միայն երկրորդական, այլև սկզբնական հարցի հետ ոչ մի կապ չունեցող պահականաւի խնդիրը նրան յաջողում է ամսից աւելի ձգձգել, մինչև որ դահիճը իւր զոհերի հետ հաշիւը կը վերջացնէր, մինչև որ Տաճկահայաստանի հայ ժողովուրդը, իւր անպագայ այդ խոջընդոտը կը հարթէր: Այդ նրան յաջողեց Ռուսական դիպլոմատիան լաւ յողթութիւն տարաւ, նա կարողացաւ վարագուրել հարիւր հազար մարդկային զոհերը, աւերակ դարձած երկիրը:

Պահականաւի խնդրում Ռուսիայի ներկայ դիպլոմատիան երևում է իւր ամբողջ կեղդոտութիւնով, երևում է Բիսմարկեան քաղաքականութեան հետեւելու մէջ, որ մարդկային չէ, այլ գազանային, որի համար նպատակը սրբում է միջոցը: Ռուսական դիպլոմատիան բարձրացնում է երկրորդ պահականաւի խնդիրը, նոյն դիպլոմատիական վարագոյրի յետեւից հարեմի լակոտին խրախուսում է ընդդիմադրելու: Նոյն դիպլոմատիան կուրացնելու, խաբելու համար քաղաքակրթւած աշխարհը, ինքը առանց արեան բծի մնալու, այն աստիճանին է հասցնում իւր ստորութիւնը, միայն թէ նպատակին հասնի, որ նոյն իսկ իրենց վեհապետին են խառնում այդպիսի մի խնդրում և ցարը միջամտում է՝ այնպիսի մի ժամանակ, երբ դրանից մի քանի շաբաթ առաջ նրա գահակիցը՝ սուլթանը նամակով դիմել էր մի սոսկ միջխարի և խնդրել, որ իւր և իւր երկրի համար ձառ խօսի: Ռուսական դիպլոմատիան այն աստիճանի լքութեան է հասնել, որ մինչև իսկ չի քաշում ստո-

րանալուց: Բայց 19-րդ դարու վերջին դիպլոմատիան թքել է բոլոր այն յատկութիւնների ու արժանաւորութիւնների վրայ, որոնք մարդկային են և ղեկավարում են պետական ու միապետական շահերով:

Մենք չենք կարծում, որ եւրոպական դիպլոմատիային յայտնի չլինէր Ռուսիայի այս ստոր խաղը. բայց եթէ մինչև իսկ Ելդիզի հարեմային ու ճահճային մթնոլորդում դժւար էր այդ տեսնել, նրանք կարող էին նրկատել գաւառներում, կոտորածի ժամանակ, թէ ինչ դիրք էին բռնել և ինչպէս էին վերաբերում կոտորածին ցարի կառավարութեան ներկայացուցիչները՝ հիւպատոսները:

Որ Տաճկահայաստանում տեղի ունեցած կոտորածը եղել է ցարի կառավարութեան հաւանութեամբ և անկցութեամբ, դորանում ոչ մի կասկած չկայ. փաստերը իրենք են խօսում: Սուլթանի կառավարութիւնը չէր համարձակիլ այդպիսի յանդգնութեամբ իւր ծրագիրը ի կատար ածել, եթէ նա խրախուսող չունենար և այդ խրախուսողը կարող էր լինել միայն ցարի կառավարութիւնը:

Այս հաստատելու համար մենք ունինք շատ փաստեր, որոնցից յիշենք մի քանիսը. Տրպաիզոնի ուսու հիւպատոսը կոպտաբար մերժեց կոտորածի ժամանակ իւր հովանաւորութեան տակ առնել ապաստան խնդրող տաճկահայատակ հայերին, ասելով՝ «դուք արժանի էք»: Կարինում կոտորածը սկսւում է ուսու հիւպատոսի Շաքիր փաշայի մօտից դուրս գալուց միայն մի քանի րոպէ յետոյ. իսկ մինչ այդ, նոյն հիւպատոսը գիշերները միշտ Շաքիրի հետ էր անցկացնում: Իսկ Ղանի հիւպատոսը ամենալիր կերպով յայտնում է՝ «եթէ մեր պետութեան մէջ հայերը այդպէս ապստամբէին, մենք աւելի խիստ կը վարւէինք»: Բաւարար չե՞ն սրանք, չե՞ն հաստատում՝ որ սուլթանի կառավարութիւնը խրախուսել է մինչև իսկ անկցել է: Եւ դեռ բաւական չէ այդ բաւական չէ, որ նա ունեցել է մեծ բաժին այդ սարսափներում, բաւական չէ, որ նա ճարպիկ մանեօվրայով յաջողեցրեց վարագուրել կոտորածը, նա ամենամամօթ կերպով յանցանքը ձգում է հայերի վրայ ու վերջիններին է դատապարտում: Կ. Պոլսի դեսպանի անխիղճ հեռագիրը հայոց կաթողիկոսին և նրան արած դիմումները ու գործ դրած ճնշումները պատրիարքի վրայ, աչք ծակող փաստեր են՝ հաստատելու ցարի կառավարութեան գործած անամօթութիւնները: Եթէ սրանք էլ բաւական չեն, մենք ի նկատի կունենանք Հայկական հարցի միջազգային բնաւորութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից, որ հայկական տարրը ուսուց կառավարութեան համար «ճաճելի» մի տարր չէ՝ իբրև ոչ լուծուող և ընդդիմադրող: Եւ քանի որ անուղղակի ճանաչարհով նա կարող է իւր նպատակին հասնել և այն էլ ուրիշ միջոցով ինչու չանել ինչու ու-

րիշի ձեռքով կրակից շագանակներ չհանել...

Այդ բոլորից յետոյ, նա սպիտակ-տէրրօր է սկսում իւր պետութեան մէջ հայերի վերաբերմամբ, և մինչև իսկ իւր ճնշող թաթը մեկնում Պարսկաստան: Նա սկսում է ամենախիստ կերպով հետևել յեղափոխական շարժման և իւր բանտերը լցնել հայ երիտասարդներով, որոնց մեզքը նրանումն է կայանում, որ ինտելիգէնտ են: Յարի կառավարութիւնը ձեռք տւած սուլթանի կառավարութեան՝ Հայկական Յեղափոխական շարժումը խեղդել է ձգտում: Նա այս տակտիկայով ուզում է երկու նպատակի հասնել՝ թէ ջլատել յեղափոխական շարժումը և իր դէմ գրգռելով հայ ժողովուրդը, նրա ուշադրութիւնը հեռացնի Տաճկահայաստանից և թէ առիթ ունենայ աւելի խիստ վարւելու ուսումնասիրի հետ: Յարի կառավարութիւնը աժան-պրօվօկատորի (agent provocateur դրդիչ-գործակալի) դեր է կատարում: Բայց այսօրւայ պրօվօկատորին կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականները գիտեն՝ թէ իրենց դերը ու կոչումը, թէ իրենց ոյժը, և թէ լաւ են ճանաչում իրենց թշնամիներին. ոչ մի պրօվօկացիա չի կարող իւր նպատակին հասնել, չի կարող հայ յեղափոխականներին դուրս բերել իր ներկայ գործունէութեան սահմաններից. թէ բանտարկութիւնները, թէ խստութիւնները, թէ անմիտ ու տղայական խուզարկութիւնները և այլն, կարժանան արհամարհանքի և սառն վերաբերման:

Մտանցոյց լինելով ցարի կառավարութեան բռնած դիրքի վրայ, ցոյց տալով, որ նա այժմ պրօվօկատորի դեր է կատարում, մենք յայտարարում ենք կրկնելով՝ որ նրան երբէք չի յաջողիլ հայ յեղափոխականներին դուրս բերել իրենց գործունէութեան սահմաններից, չի կարող նրանց ջլատել ու գործունէութեան մէջ բաժանուններ առաջ բերել: որքան էլ նա, ցարի կառավարութիւնը վստահ լինի իւր Ֆիզիքական ոյժի վրայ, բայց և այնպէս հայ յեղափոխականը հաստատ կը մնայ իւր կոչմանը և կը շարունակի կռիւը:

Թող ինչ ուզում են անեն, թող եւրոպական դիպլոմատիան խաղալիք դառնայ ցար-սուլթանական դիպլոմատիայի ձեռքին, թող կոտորեն, բայց և այնպէս հայ ժողովուրդը հաւատարիմ կը մնայ Ազատութեան դրօշակին, բայց և այնպէս, հայ ժողովուրդը, շուտ թէ ուշ կը հասնի իւր նպատակին—կը կանգնի սուլթանական կառավարութեան դիակի վրայ: Ապագան հայ ժողովուրդինն է:

Գրուած

ՁԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ՆԴՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

Փոանսիական Temps թերթը հաղորդում է.— Հաստատում են, որ տաճկական զօրքը Ձէյթունի առջև մի փառաւոր պարտութիւն է կրել: Մարաշի բողոքական եկեղեցիները լիքն են վիրաւորած զինուորներով, որոնց խնամում են մասիճուարները: Հաղորդում են, որպէս թէ 5-600 հոգուց բաղկացած հայկական երկու գունդ, որոնք ապստամբներին օգնելու էին գնում, Ձէյթունը պաշարող կանոնաւոր զօրքի կողմից մեծ նեղութիւն են կրել:

**

Ըստ Հաւասի գործակալութեան, պատերազմական միսիստըրը նկատելով, որ հիւպատոսական միջնորդութիւնը որ և է հետևանք չպիտի ունենայ, հրամայել է Աեսարիայի վրայով 1000 մարդ ուղարկել, Ձէյթունը հիւսիւսային կողմից պաշարելու համար:

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԻՑ

II

Անշուշտ լրացուցիչ տեղեկութիւններ կուզէք ստանալ քաջարի հայդուկային խմբի մասին, որը սահմանագլխից սկսած մինչև Հաջի-Ղալաղ գիւղը՝ չորս օր ու գիշեր անընդհատ կորովե կռիւ մղելուց յետոյ անհամեմատ անհաւասար ոյժի դէմ, զէնքի ոյժով ճեղքեց Համիդիէ գնդերից կազմած շղթան և մտաւ երկրի խորքերը: Այս անգամ պիտի լռեմ այդ մասին, որովհետև պակասում են ճիշտ տեղեկութիւններ:

Ինչքան ոգևորեցնող է հայ ժողովուրդի համար հերոսական մի այդպիսի կռիւ մղած մի բուռն քաջերի կողմից ահագին բազմութեան դէմ, նոյնքան էլ սարսափեցնող էր այդ մանաւանդ քիւրդ ցեղերի համար:

Համիդիէ գնդերը ցեղապետների առաջնորդութեամբ իրենց թոյնը թափեցին գիւղացի հայերի վրայ: Ամբողջ Ասպուրականը դարձաւ սպանութեան, թալանի և սոսկալի չարագործութիւնների ասպարէզ: Սուլթանի հայերի նկատմամբ հրամանագրւած ջնջելու ծրագիրը սկսեց գործադրւել ամենայն ճշտութեամբ: Հայերի ստացածքը, տան կարասիքը, նախիրը, ամբողջովն դարձաւ քրդերի սեպհականութիւն. բազմաթիւ գիւղեր այրւեցան, դարձան աւերակ և բնակիչներից նրանք, որոնք կարողացան ազատել իրենց գլուխը, թողին ամեն բան և ապաստան գտան Անտում կամ գայմա-գամանիստ որ և է քաղաքում, ինչպէս Բաշկալէ, Արձակ և այլն: Իսկ քրդերը հայերից բերած թալանը ազատ համարձակ ծախում են Խոյ և Սալմաստ գա-

ւաններում: Մարզկցիների ցեղապետ Շարաֆը, որը անցեալ տարի 500 հոգով յարձակեց Դերիկի վրայ և ամօթապարտ յետ դարձաւ, այս տարի ևս իր մօտ 400 մարդկանցով, նախապէս թալանելով և աւերակ դարձնելով հայաբնակ Բունաւիկ գիւղը, յարձակեց Կօթուրի վրայ, որը սահմանադիւի վրայ Պարսից բերդն է համարուում: Հայերը և պարսիկները միացած ամրանում են բերդում, վճռելով մինչև վերջին շունչը դիմադրել Շարաֆի ոյժին: Թ Ժամ կռիւ մղելուց յետոյ, Շարաֆը երեք դիակ թողնելով ստիպւած է լինում գլխակոր յետ քաշել, որովհետև պարսիկ խանը զինում է հայերին կառավարական հրացաններով և գործի է բերում թնդանօթներն անգամ: Հայերից թեթեւ կերպով վիրաւորուում է Կօթուրցի Գրիգորը: Այնուհետև Պարսից կառավարութիւնը ամրացրեց իր սահմանները զօրքերով, որպէս զի կարողանայ քրդական արշաւանքների առաջն առնել, որը, պէտք է ասած, շատ հաւանական է համարուում:

Սուլթանի կառավարութիւնը չբաւականանալով հրոսակախմբեր ուղարկելով իր հարեան կառավարութեան սահմանները, նա աշխատում է Պարսկաստանում լարել մի դիւային մեքենայութիւն, որը, մենք լիայոյս ենք, կը ցնդի օդի մէջ: Իր հիւպատոսների և վարձկան գործակալների միջոցով նա՝ հարձերի սպասուորը, ձգտում է խլրտում, ընդհարում առաջ բերել պարսիկների և հայերի մէջ, գրգռելով առաջինների ֆանատիկոսութիւնը: Քանիցս փորձեր եղան, մարդիկ վարձեցան առիթ լինելու մի այդպիսի ընդհարման, սպանելով այս կամ այն մօլլային կամ շէխին, բայց այդ գաղտնի դաւերը բոլորը բացւեցան...

Նամակիս հետ կցում եմ Աղբակի աւերած գիւղերի և սպանութիւնների նկարագիրը: Պէտք է ասել: որ Աղբակում խժդժութիւններ գործողը վերև յիշած մարզկցիների ցեղապետ Շարաֆն է, որը ահա քանի տարի է տաճիկ կառավարութեան կողմից արտօնութիւն է ստացել բնաջինջ անելու Աղբակի հայերին: Քրդերը յարձակուում են Սօրան գիւղի վրայ, գնդակահար անում Յարութիւն անունով երիտասարդին և քշում 300 ոգխար: Նոյն վիճակին են ենթարկուում Բերդակ, Լաշաթ և Բաշ-Գիւղ գիւղերը: Այդ գիւղերում, սպանուում են 4 հոգի և Եղիսարէթ անունով մի կին իր հարսի հետ:

Վերջին գիւղում 6 կանայք օրը ցերեկով գիւղի փողոցներում բռնաբարուում են քրդերից:

Քշում են Առակ գիւղի ոգխարի հօտը, Խաչատուր անունով հային վիրաւորում իր եղբօր հետ, իսկ Աստուածատուր անունով հայի դիակը մինչև այժմ կառավարութիւնը իրաւունք չէ տալիս վերջնելու:

Աւերակ են դարձնում, այրում Պատկան, Մալքաւա, Սօրագեր, Չուխ, Հերեսան, Առակ և Աղբակի գրեթէ բոլոր գիւղերը: Սոսկալի սպանութիւններ, առևանգումներ են տեղի ունեցել գրեթէ բոլոր գիւղերում: Գիւղացիք թողած իրենց գիւղը, տունը, ամեն բան՝ անօթի, մերկ, կենարոնացել են Բաշկալէում և ապրում են մուրացկանութեամբ...

Բ Ա Ս Ե Ն Ի Գ Ի Ի Ղ Ե Ր Ի Ա Ի Ե Ր Ո Ւ Մ Ը

II

Դէլի-Պապայի անվեհեր կուլից յետոյ, երբ քրդաց վայրենի և սովալուկ բազմութիւնն կորագլուխ յետս վերադարձաւ, թէ թուրք, թէ քուրդ ամբոխի և թէ տաճիկ կառավարութեան համար մի անտանելի ցաւ, մի անբուժելի վէրք դարձաւ, որ մի հայ գիւղ պաշտպանւել է և բնակչաց կեանքն ու պատիւը պահպանուել: Պատաղցի քիւրդ ցեղի ցեղապետը Զըպէթ անուն, ուստի իւր Մուհամմէդի անւան վրայ, հոկտ. 29-ին գալով Տօդի հայաբնակ (բայց այժմ աւերակ) գիւղը, կսկսին մնացած դռները քանդել, հրդեհել, կոտորել: Վերջապէս բռնութիւն, աւերած ու սրբերի շողջողիւնը միայն կը տեսնէր, իսկ հայ—ոչ երբէք: Դէլի-Պապայի երիտասարդները, իրենց գիւղի շրջակայքը ամրացնելով, կսպասէին այն ըոպէին, որ բաղդը պիտի որոշէր իրենց ապագան ու պատիւը: Ահա՛ քրդաց կողմից լրաբեր մի գալով, գիւղի գիւղապետ Համբար աղա անուն ազնիւ հայի քով, յիշեալ քիւրդ ցեղապետի կողմից կը բարևէ և կը հրամայէ անձնատուր լինել, բայց Համբար աղան պատասխանելով կրտ. «Թէև մենք, արեան, կապուտ կողոպուտի ծարաւի չենք, բայց եթէ նա դալիս է, մենք պատրաստ ենք ամեն կերպ, մինչև վերջին շունչ դիմադրել, մենե՛լ և ապա տեսնել մեր զաւակաց գերութիւնն, մեր տանց աւերումը և այլն...» Լսաբերը դեռ չէր վերադարձած, Դէլի-Պապայի երիտասարդներն բարձրացան իրենց պատնէշներն և կազմ ու պատրաստ կսպասէին իրենց սարսափելի ըոպէին: Քիւրդ ցեղապետը, որ մի օր առաջ մի քանի հարիւր հեծեալներով գալով Տօդի աւերակ գիւղը, բոլորովին հողի հետ հաւասարացնելէ վերջ դեռ չէր յագեցած, ուզեց իր պարտութեան վրէժն առնուլ Դէլի-Պապա գիւղէն: Վերոյիշեալ Թար-Խօջա գիւղէն՝ յիշեալ Ղատր յիսնապետը իրա զօրքերով, իւր հետն առնելով Տօդի գիւղի Պոյաճեանց նահապետական և ամենահարուստ տան երկու զաւակներն՝ Պոյտօ և Հայրապետ, իրը թէ ցոյց տան իրենց կողոպուած 500 ոգխարը, հարիւրէ աւելի տաւարները, իրենց տան անթւելի գոյքը և կայքը, բայց հազիւ հասել էին Տօդիի մօտ, Դէլի-Պապայէն ևս մօտ 30 տօղեցի հայեր գնացին հաշիւ տալու իրենց մնասնների և աւերմունքների: Երբ սրանք ևս այս կողմից հասան իրենց գիւղի մօտ, ահա՛ լուեցին հրացանի ձայները քրդերը կը դիմադրեն զօրաց, զօրքերը խոյս կուտան և էլի խեղճ հայերը կը մնան այդ վայրենիների ճանկը: Հայերը լալով ու աղաղակով կը փախչեն, քրդերը հրացանի գնդակները կը տեղացնեն, մի ըոպէում չորս մեռեալ և մի քանի վերաւոր թողելով դաշտի մէջ՝ հայերը դեռ կը փախչէին և թշնամին հետամուտ եղած կը գողար՝ «կոտորել կեա՞վունքներն»: Եթէ Դէլի-Պապայի դազաթէն պահապան հրեշտակի նման չը հասնէին մի քանի գնդակներ, բոլորը կը կոտորուէին... երբ մի քանի վերաւոր պետին փուլեցին, քրդերը սարսափահար յետ նահանջեցին:

Դեռ սրտներուս մորմօրը չէր հանդած, ահա՛ Դէլի-Պապայի կիրճից և Պարինի կողմից լուեց զօրաց փողը

ձայնը, 80 հեծեալ՝ հազարապետով՝ միասին, որոնց հետ մտ 10-15 համրգիականներ: Թէև հազարապետը քրդ-դերուն կը յորդորէ հայերու վոյս յարձակիլը, բայց քրդերը՝ այդ արիւնարբու համրգիականները, աւելի բարձր, աւելի ազնիւ կը գտնուին, քան հազարապետ մը, ըսելով որ «մենք անկարող ենք մի այդպիսի դաւ լարելու»: Աերջապէս հազարապետը իւր արիւնուռչտ զօրքերով իջաւ Դէլի-Պապա գիւղը, ապա իւր մտ կանչելով Դէլի-Պապա գիւղի ազնիւ հայ համբար աղան, նախ խոստումներով, շքանշաններով կը յորդորէ ըսելով՝ «դիտեմ, որ ձեր գիւղում կան երկու երեք հարիւր զինեալ հայ յեղափոխականներ, եթէ ստոյգ չէ, ինչպէս կըլլայ հապա, որ Բասենի բոլոր գիւղերը աւերակ և ամայի դարձան, իսկ ձեր գիւղը ոչ եթէ կը խոստանաս ծշմարիտն ասել, այս րոպէիս քեզ թողակ տալու հրաման կը բերեմ»: Երբ նա անվեհեր կերպով կը պատասխանէ թէ՛ «բնաւ չկան այդպիսի յեղափոխականներ», անմիջապէս զօրքերին կը հրամայէ հրացանի դնդակով խփել:

Գիշեր էր: կանանց և մանր երեխայոց ողբն ու աղաղակը գիւղը թնդացուց: լուր տարածւեց, որ յիշեալ համբար աղան հրացանի գնդակներով կսպանեն: Հասան ծերունի կանայք սրտամորմօք և աղեկտուր լացով հազիւ աղատեցին: Ահա հազարապետ մը, որ հրացանի գնդակներով կը հարցաքննէ խեղճ ժողովուրդը:

Այսօր դեռ րոպէ մը գտայ ազատ նկարագրելու այս անցքերը, մանրամասնութիւնները ի բաց թողով: Ո՞ր գիտէ այլ ևս բաղդը գուցէ չը յաջողէ մեզ մեր հայ եղբայրք արտասովոր անցքերը, վիշտը ու տառապանքը տեսնել ու գրի անցնել: Միայն սա շափ կարող եմ ասել, որ մեր նկարագրածները համեմատելով միացածների հետ՝ սա խաղաղութիւն և երջանկութիւն են համարում:

Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր

Ե Ր Չ Ն Կ Ա

I

Հատոնց թուրք խուժանին մէջ պատրաստութիւններ կը տեսնուէին հայերը ջարդելու համար: Աերջին օրերս սկսան իրենց գոյնը բոլորովին դուրս տալ և դէս ու դէն տարաձայնել՝ թէ կեանքները պիտի կտրտենք: Հայ ժողովուրդը տեսնելով, որ տարաձայնութիւններն սպառնական երևոյթ մը կսկսին առնել, վճռեց, որ փոխառաջնորդը քահանաներու և ժողովուրդին երևելիներուն հետ դիմեն Ձէքի փաշային և իրենց ցաւը յայտեն: «Մենք, կըսէ պատգամաւորութիւնը, այլևս վստահութիւն չունինք քրդերուն վրայ. մեր ժողովուրդը խանութները դոցելով՝ իրենց տուններուն մէջ պիտի ապաստանի՝ դէթ իր կեանքը ազատելու համար»: Սրիկայ Ձէքին կեղծաւորութեամբ կապահովցնէ զքրդերը, և կը խոստանայ ինք անձամբ հսկել: Քանի մ'օր ալ անցաւ. թուրք խուժանը երթալով կը կատաղի, արիւն

կը փնտռէ խմելու: Դիմում դիմումի վրայ. վերջին անգամ, երբ թուրքերը պէտք եղածին պէս պատրաստ էին, Հայաստանի ժանդարմտը-Ձէքին հայերը ծուղակի մէջ լաւ ձգելու համար, զինուորներ կը հանէ երկուշաբթի օր և փողոցներուն բերանը կը շարէ, իբր թէ կատաղած խուժանին առջևը առնելու համար:

Երկուշաբթի առաւօտ, ժողովուրդը ձարահատ, քիչ մ'ալ Ձէքի խօսքին ապաւինելով (վերջապէս կը կարծենք թէ քիչ մը արժանապատուութեան զգացում կունենայ), սկսաւ շուկան ելլել, թէև քիչ մը կասկածոտ: Զինուորները բռնած հայերուն վրայ կը խուզարկէին և եթէ զէնք գտնէին, կը գրաւէին ըսելով՝ «մի՛ վախնաք, թուրքերունն ալ պիտի ժողովենք. դուք անհոգ ձեր գործերուն գնացէք»: Հատեր՝ դեռ քաղաքի կեդրոնը չը հասած՝ ետ դարձան, կարծես նախազգալով պոռթկացող փոթորիկը: Վերադի օրերը շրջակայ թուրք գեղերուն լուր կը ղոկէր, որպէս զի երկուշաբթի օրերը՝ որ բազարի օր է, զինւած դան և երբ մունետիկը պոռայ, թէ ժամանակը լըացած է, յարձակին հայերուն վրայ և կոտորին:

Թուրքերուն համար ուրախութեան և հարսանիքի օրեր էին այդ օրերը, անհամբեր պատրաստութիւններ կը տեսնէին անպաշտպան ժողովուրդ մը մորթելու համար: Բաւական ժամանակ ո՛ր և է յարձակման նըշան չէր երևար, այնպէս որ հայերը անկասկած՝ քաղաքին մէջ տարտղնեցան իրենց գործերովը զբաղելու համար. այդ միջոցին յանկարծ իրարանցում մը, գոռում գոռում մը փրթաւ քաղաքին մէջ. 10000 զինեալ աւազակներ սկսան անխնայ կոտորել անդէն ծօղովուրդը. փախող փախողի, լաց, ձիչ, աղաղակ երկինք ու երկիր կը թնդացնէին. թշնամին անթօրէն կը զարնէ, ո՛չ երեխայի, ո՛չ կնոջ կը նայի. մէկ կիբք մը միայն ունի գետինը ծածկած տեսնել հայի անշունչ դիակով և արիւնով: Անոնք, որ կողմակի փողոցներէն կը փախչէին, պահապան զինուորները սկիւններով ետ կը մղէին արիւնկգակ խուժանին գիրկը: Միայն քանի մը սրտոտ երիտասարդներ կարող եղան՝ սկիւններու վրայէ թռչել և ճողպարել անթրջական մահէն: Քիչ յետոյ բարձրագոյն հրամանով պահապան զօրքն ալ սկսաւ իր շահատակութիւնը կարծես թէ բաւական չէին անգուժ խուժանին խոցերը, սկիւններն ալ մէջտեղ ելան և այնքան անմեղներու, այնքան ազնիւ հոգիներու արիւնը թափեցին:—Երբ անտէր հայ ժողովուրդը ահաբեկ, ծակէծակ կը փախչէր, թուրք աւազակ խուժանը քրդերու հետ խանութները կողոպտել սկսաւ. ակնթարթի մը մէջ բոլոր հայ խանութները ամայացան, ասեղ մը անգամ չէին ձգեր որ աչքերնիս կոխէինք, և որովհետև այդ ահաբեկ ապրանքը չէին կարող կրել, աւելորդ մասը ծախեցին ամենաչնչին գնով. 10-20 սկիի ապրանքը 20-30 դահեկանի կուտային:

Մեռածներուն և վերաւորածներուն թիւը չափ չունի:

Դիակներուն մէկ մասը յանձնեցին Եփրատի որոտահոս ալիքներուն, որոյ մայրական գիրկը Հայաստանի բազմաթիւ անբախտ զաւակներուն յաւիտենական պատանքն եղած է: Քիւրդ մը երդում պատառ կըլլայ՝ թէ ինք իր աչքով տեսեր է 20 դիակներ՝ Եփրատի մէջ նետելին: Իսկ անոնք, որ սկիւններով սպանւած էին,

զինւորները բաՏ և փետատ առած, սպլբրով տարին քաղաքէն Տեոու մասնաւոր փոսերու մէջ թաղեցին, տրտնջալով, թէ «կեալուրներուն սատակածներն ալ իրենց գլխներուն պէլա եղան»։—Որպէս զի կառավարութիւնը իր բարբարոսութիւնը ծածկէ, մէկ քանի վերաւորեալներ և քանի մը դիակներ ալ հայոց բերաւ յանձնեց՝ ցուցնելու համար թէ ինքը պաշտպան է հայերուն։ Վերաւորեալները անթիւ են. իսկ կառավարութիւնը մեզի յանձնած է միայն 100 մեռած, անոնք ալ անձանաչելի վիճակի մէջ. կարելի չէ այդ թշուարներուն վրայ նայել և չանհիծել այս աշխարհը. մարդկային սրտերը չեն կարող դիմանալ։ Բոլոր դիակներն ալ մինչև իրենց շապիկը ու վարտիքը կողոպտած և մօրէ մերկ ձգած են։ Երեք օր վերջը, այդ նահատակները թաղեցան։

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Յ

Կեսարիայէն 25 նոյեմբեր թիւ քաշած Տեոագրէ մը կը տեղեկանանք՝ թէ հոն ալ կոտորած տեղի ունեցած է, — մանրամասնութիւնք կը պակսին։

— Կարին 25-ին նոյեմբերի (ն. տ.)։ Երրորդ անգամ ըլլալով տաճիկներն վատարար յարձակում գործեցին. հայերէն 12 մեռաւ, 20-ի չամի ալ վերաւոր։

Ամեն շաբաթ Օսմանեան նաւերն Պոսէն խուճը-խուճը հայաստանցիներ՝ հսկողութեան ներքև Տրապիզոն կը բերուեն, որք քանի մը օր բանտերն չարչարելէ վերջ՝ ձեռքերնին մէկ օրայ բաւելու չափ հաց առած, զինւորներէ շրջապատեալ կանցնեն կերթան՝ քայց ո՞ր, ո՞ր կողմի անդունդը, դժւար է որոշել. արդէն ո՞վ կրնայ գիտնալ, ամեն հայ մահուան դուռն հասած է։

Սիւրմէնէի հայոց վրայ յարձակող 1500-ի չափ պաշկոտուքներ և զինւորներ, որք իրենց անյաջողութենէն յուսահատած Բաբերդի և շրջակայ անգէն գիւղերու վրայ յարձակած էին, վերադարձան անհամար աւարներով ու դերիններով, միայն ճավուտրցի 400 տաճիկներն, 60 հայ աղջիկներու խուճը մը իրենց աները քայցուցին։ Շատ ու շատ հարսեր ու աղջիկներ ալ իրենց պատիւն պաշտպանելու համար ինքնասպան եղան, մանաւանդ Քսանթայի հայուհիք, իրենք զիրենք ջրի մեծ հորերու մէջ նետելով՝ եղերական մահով ազատեցան բռնաբարութիւններէ, այնպէս որ հետպնդողները, որք ուշացած էին՝ իրենք զիրենք դիակի կոյտերի վրայ գտան։

Նոյեմբերի 18-ին Սիւրմէնէի տաճիկներն անգէններու վրայ տարած յաղթութենէ քաջալերած՝ կրկին Ալէքս-Յերէի ժուճք թաղի հայոց վրայ կը յարձակին ստորաբար, կսպանեն ի միջի այլոց Աւետիս Յաւլաշեան՝ որ օգտակար ու խելացի անձնաւորութիւն մըն էր։ Նոյն օրը ուրիշ խուճը մըն ալ զապթիկներու ընկերակցութեամբ կը յարձակեն Կէմմանոս գիւղի Մարդէշ Գալի վրայ և անուսի գործիչ Յարութիւն Աւճեանը ծանր կերպով վերաւորելէ վերջ՝ կը յաջողին 10 սուռն ալ այրել և թալանել։ Նոյեմբեր 20-ին երկու

օր վերջ՝ տաճիկներն սպանեցին Մարիամ անուն օգտակար կինը։

Հայերն բնաւ չէին կարծեր, որ կրկին և կրկին կառավարութենէն յարձակում կը կրեն, մինչ դեռ անդին սուլթանն ու իր արքանեակներ գիշեր ցերեկ կը մտածեն թէ ինչպէս շուտով հայերն բնաջինջ ընեն։

Այժմ կառավարութիւնը այլ միջոցի մը դիմած է իր զինւորներու և պաշկոտուք գործակալներու միջոցաւ բացարձակապէս կստիպէ հայ գիւղացիներն, որ կրօնափոխ ըլլան. ալ ձեզի կը թողունք երեւակայել անգէն, յուսահատ ժողովուրդին քաշածներն։

Գազան կառավարութիւնը այսքան թափած արիւններէ չէ յագեցած դեռ։ Ինչ պէտք է ընել։

Ձէ, խէզ սուլթան, այդ քեզ ընել չի յաջողիր, մեք մեր արեան հեղեղներով քո սև, ազտոտ հոգիդ մէկ օր անպատճառ պիտի խեղդենք, և գիտնաս, որ ամենավերջին րոպէին իսկ մեր այրած սրտերէն թռած արդարութեան ճիշդ անբարոյական գահգ պիտի շանթահարէ։

Յառանջ մեզ ալ, քեզ ալ, դուն ամեն տեսակ լըրբութիւններ քեզ զէնք շինելով ջանա՛ մեր ձայնը խեղդել։ Մենք, իրաւունքի և ճշմարտութեան զաւակներս, վստահ մեր իրաւանց արդարութեան վրայ, պիտի կռուինք, աչքերնիս վճռական մահուան յառած ենք. այս կերպ չենք մնար. կամ կապրինք իբր ազատ մարդ կամ կը մեռնինք. կամ մինը կամ միւսը։

Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ա Ե Ի Շ Ր Զ Ա Կ Ա Ն Ե Ը

Հոկտ. 31-ին, երեքշաբթի, տեղացի թուրք և դուրսէն եկած քիւրդ խուճանը յարձակեցան շուկայի վրայ և սկսան անգէն հայերը կոտորել և ամեն բան աւարի տար։ Չը մնաց վաճառական մը, որուն խանութը չեթալուէր. վայ անոր, որ կը յանդգնէր դիմադրել այդպիսին ոչխարի պէս կը մորթէին։ Մտան մեծ շուկայի մէջ՝ փակած խանութներու, մթերանոցներու դռները կոտորեցին և մէջի եղած բոլոր ապրանքը յափշտակեցին, մերկ պատերը միայն թողով։ Նիւթական վնասնիս հաշուել անկարելի է։ 40 սենեակ ունեցող պանդոկի մը մէջ, ուր հայ վաճառականք կը բնակէին, այժմ 7 հոգի միայն կայ. բոլորը սրէ անցուցին։ Թըրքաց մօտ հայ թաղերը ողջ մնացող երեք չկայ. հրապարակներու մէջ դիակներ կը դիզէին։ Կոտորածը սոսկալի էր. Մարթիներու և ատրճանակներու ձայնը օդը կը լեցնէր. խեղճ ժողովուրդը սարսափահար ուր փախչելը չէր գիտեր, ամեն կողմ արիւնը գետի պէս կը հոսէր. աղաղակը, թափած արցունքը նշանակութիւն չունէին, Հայրիկ, մայրիկ պոռացողներուն աղաղակները մարդու ջիղերը կը սառստացունէին, մազերը կը քստմնեցունէին. շատերը վախէն նւաղած ինկան։ Գազանները թէ կին, թէ տղայ անխնայ կոտորեցին և ամեն ինչ շուկայի մէջ թալանելէն վերջ՝ սկսան տուններու վրայ յարձակիլ. հինգ հարիւրի չափ տուն թալանեցին. սպանածներու թիւը 2170 է, որոց 200-ը կին

է, և 500-ի չափ ալ վերաւոր: Մէկ տունէ 2-3 հոգի մեռած շատ կայ:

Այժմ հայ գերեզմանատունը 200 կանանց և 600 արանց արիւնաթաթախ դիակներ բերած են: Ողջ մընացողները ներքնատները ծակելով՝ միմեանց հետ յարաբերութիւն կրնան ընել դուրս ելնել ոչ ոք կը համարձակի:

Վուրի առաջի պահուն վիճակիս առաջնորդ Քահաճիզ՝ ճեան Պետրոս սրբազանը կուսակալին կը դիմէ և օգնութիւն կը խնդրէ: Վուսակալը կը պատասխանէ, թէ «քանի մը սրիկաներ կը կուին, ադոր համար ի՞նչ ջօրք հանեմ»: Առաջնորդը կը պնդէ, որ հայ ժողովուրդը կը կոտորուի, բազմաթիւ դիակներ ինկած են փողոցներու մէջ, թէ այդ քանի մը սրիկաներու մէջ տեղի ունեցած կուր մը չէ, թէ ջօրքի միջամտութիւնը անհրաժեշտ է և այն և այն: Վուսակալը կը անտանայ պարզապէս ժամանակը երկարելու համար: Առաջնորդը կրտսիպէ՝ որ անյապաղ ջօրք հանէ: Անտան կուսակալը հեռագիր մը կը ցուցնէ և կըսէ՝ «Այսպէս հրաման եկած է մեզի. 24 ժամ պիտի կոտորեն, թալանեն և անկէ վերջը միայն կառավարութիւնը ջօրք կը հանէ խաղաղութիւնը վերականգնելու համար»: Քանի մը ժամ վերջը, արդարեւ, ջօրք կը հանէ. ասոնք փողոցներուն բերանը կեցած, փակելի ուղող հայերը կարգելին ու թուրք խուճանին կոտորել կուտային: Կոտորածին ջօրքն ալ կը մասնակցէր և փակառններին կը զարնէին, ըսելով՝ «տահա պիտ պօքու եկէ՛մէտինիդ»: Զօրքը նոյն իսկ կը քաջայերէր ու կը գրգռէր խուճանը և փակառնը ցուցնելով՝ «կեափուր իսէ վուրուն» (հայ է նէ զարկէք) կը պոռար. աղբիկներ, հարսեր կը բռնաբարէին ու կսպանէին: Մինչև այժմ տուններու մէջ փակառնները տակտակներու ու չոր գետնին վրայ կը պառկին. ցուրտը արդէն սկսած է, եթէ անմիջական օգնութիւն չըլլայ, ցուրտն ալ մեծ կոտորած պիտի ընէ: Արդէ զատ խեղճ ժողովուրդը նորէն ամեն օր վախի ու դողի մէջ է: Նորանոր դէպքեր անպակաս են. գիւղերուն մէջն ալ սարսափելի կոտորած կայ: Առշասար ըսած գիւղին վրայ քովի տաճիկ գիւղերէն մէկ երկու անգամ՝ յարձակեցան, բայց չի յաջողեցան. վերջը կառավարութիւնը ջօրք հանեց յիշեալ գիւղի վրայ, չորսհարիւր հոգի սպանեցին, եզ, ոչխար, էջ, ձի ամեն բան քշեցին տարին եկեղեցին քանդեցին, արծաթեղէն, ինչ որ կար յափշտակեցին. միայն պղտիկ մէկ մասը լեռները փակելով՝ ազատեցան:

Դրամած գիւղէն հարիւր հոգի սպանեցին և ամեն ինչ առին տարին. ոչ սերմ մնաց և ոչ ձմեռան պաշար:

Նոյեմբ. 28-ին Բուսբերդ գիւղէն Դաւթեան տէրի Սարգիսը բռնեցին, շատ չարչարելէ վերջ՝ Ղօճասար տանենք պիտի ըսելով, տարին գիւղին եզերքը մորթեցին. ապա եկան տղան ալ ուղեցին, բայց տղան փակած էր: Մինչև այսօր անյայտ եղած է. ուրիշ մէկ երկու անձինք ալ սպանեցին, բոլոր ոչխարնին և ունեցածնին յափշտակեցին:

Սեբաստիոյ Քօզնի գիւղին աւագ երկեց քահանան և հաճի թաթեալը և ուրիշ երթը անձեր ալ մորթեցին: Սարսափահար եղած գիւղացիք ձգեցին լեռը ելան իրենք զիրենք ազատելու համար Յակաւին յայտնի չէ, թէ ո՞վ մեռաւ, ո՞վ ողջ մնաց. մանրամասնութիւնք կը

պակսին:

Մի քանի գիւղեր՝ որոնց մէջ տաճիկը քիչ է, կառավարութենէն ջօրք շօղեւած է իբր տաճիկները պաշտպանելու համար: Այդ անօթի դայլերը և անոնց ձիերը հայերը կը կերակրեն: Այս մի քանի գիւղերն ալ այսպիսով կը թշուառացնեն:

**

Կ Ի Ի Ր Ի Ն

Երկրիս վիճակը գուժելու համար՝ գրիչս ինկածներու արեան մէջ թաթախած կը գրեմ, հաղորդելու համար ոտիւ, թէ ի՞նչ պատահեցաւ մեզի:

1895 հոկտ. 31-ին, ահագին բազմութիւն մը թուրքերու, քիւրդերու և չէրքէզներու՝ մօտ և հեռագոյն վայրերէ, այնէ՝ Ազիզիէ, Ալպիւսթան, Կանկալ Տարէնտէ անուն գիւղերէն՝ գունդ կազմած արշաւեցին աւանիս վրայ և սկսան մէկ ծայրէն մինչև միւսը անխնայ կոտորել: Տուները, մտան և յափշտակելով կաթնկեր մանուկներ իրենց մօր գրկերէն, օգին մէջ կը նետէին և յետոյ իրենց սուրերը բարձր բռնելով՝ վրան կը ձգէին և զանոնք շամբուրի պէս կը դարձնէին: Մեր գեղանի կոյսեր և հարսներ լկեցին, խայտառակեցին, շատերն ալ հետերնին առին տարին կարիճ, անզէն երիտասարդաց գլուխները՝ դրանց սեմերու վրայ դնելով՝ կացինի մի հարեւո՞ղ կը թոցնէին. իսկ ծերունիները այրեւած, հրդեհեւած տանց աւերակին տակ թաղեցան, մոխիր դառնալով հրդեհի խարոյկին հետ... Արեան հեղեղներ յորդեցան ամեն հայ փողոցներու մէջ: Այժմ հազարաւոր թշուառներ աստ անդ խելայեղ կը թափառին: 24այ անոնց վերջին սպեղանի. անտէր անտէրունչ լքած են: Ոչ ոք կը համարձակի դուրս ելնել մեռելոց դիակները կը փոտին ու կը նեխեն հրապարակաց մէջ: Սոյն ահուճի կոտորածէն ազատ մնացող ամենափոքր մէկ մասը մերի, նօթի և անտուն է. զի հայը տուն չունի այլևս, ամենն ալ կրակը լափեց ու աւերակ ըրաւ: Գոյք, կարասիք, ուտեստ, ինչ որ կը գտնուէր, յափշտակեցին տարին, այնպէս, որ չորս օր անընդհատ աւար կրելով՝ հազիւ հասցուցին: Ողջ մնացողներն ալ ցուրտէն և քաղցէն մեռնելու վրայ են: Եթէ մուրալու ըլլան, պատառ մը հաց սուղ ալ չկայ, հայը չունի որ տայ, ալ ո՞վ պիտի գլթայ:

Մերի, բոբիկ, գլխիբաց, ցրտին. դիմաց դողացողներ անհամար են: Կրակ, կրակ, հաց, հաց աղաղակողներու ձայնը երկինք կը բարձրանայ: 10,000-է աւելի են յարձակող վայրենիք, որք կը պոռան միշտ՝ «մեր թագաւորը հրամայեց մեզի սրէ անցնել բոլոր կեափուրները և յափշտակել անոնց ունեցածը»:

Արդարեւ, անոնց ամենքը զանազան իրարմէ հեռի վայրերէ, միևնոյն օրը, միևնոյն ժամուն միասին հաւաքումը, իրենց կանխաւ պատրաստութիւնը և կառավարութեան մասնաւոր հրահանգը կապացուցանէ, կառավարութեան՝ որ խուլ եղաւ և անջք գոցեց բոլոր բազանային արաղքներուն:

Նահատակեալ զոհերու թիւը 1800-ը կանցնի. հետերնին տարեւած կոյսերու և հարսներու թիւը դեռ

անօրօջ է. շատ մ'ալ անյայտ և կորուսած անձինք
ունինք: Այս է ահա մեր վիճակը:

* *

Տարէնտէ, Աշոտի, Գարանար, Մանճըլըզ չորս գիւղերն
ալ գրեթէ զուտ հայաբնակ են: Վիւրինի վոյս յարձա-
կող քիւրդ, չէրքէզ և թուրք վայրենեաց ահագին բա-
նակը՝ այս գիւղերուն վոյս ևս յարձակած է: Աշոտի
և Գարանար իսպառ աւերակ դարձած և բնակչաց մե-
ծագոյն մասը սրէ անցուցած են: Տարէնտէ ամբողջ
կողոպտած և բնակիչներուն մի մասն ալ ջարդած են:
Մանճըլըզ գիւղին բոլոր հարստութիւնը՝ ոչխար, հօտ,
տան կարասի, մանաւանդ համանուն հոգեկաւոր և հա-
րուստ վանքը բոլորովին թաւնած են: Այստեղ ալ կի-
սով չափ մարդու կորուստ կայ: Սով և նեղութիւն տի-
րապետած է ամենուրեք:

* *

Կ Ե Ս Ա Ր Ի Ա

1895 թ. նոյնի 18-ին, շաբաթ օր, ցերեկեան ժամ
8 ու քառորդէն սկսեալ տեղացի թուրք խուժանը
յարձակեցաւ նախ շուկային և հայ վաճառականներու
բնակած պանդոկներու վրայ: Կողոպուտ, աւարառութիւն,
սուր և արիւն կը տիրէր քաղաքին մէջ: Շատ քիչեր
կարողացան թողուլ իրենց կրպակը ու փախչել: Նոյն-
պէս քաղաքիս շուրջը եղող հայ տուններու մէջ ոչ
ոք մնաց կենդանի: Պատուով պանդոկին մէջ 43
հոգի հայ աղքատ կոշիկաւորներուն և ոչ մին պրծաւ
թրքաց անողորմ սրէն. եղան այնպիսի տուններ, որու
բոլոր անդամները՝ ծերէն մինչև օրրանի կաթնիկեր մա-
նուկը՝ սրէ անցուցին մասնաւոր նպատակաւ: Պէտքա-
կաւոր Պեղուն Չարըզ՝ անուն հարուստ հայաբնակ շու-
կան աւարի տալէ յետոյ՝ քարիւղով ամբողջը վառեցին:
Վիւթական փնասնիս անհամար է. զոհերու թիւը
2000 կը հասնի... աւան մեզի: Սոյն աւարառութիւնը
և կոտորածը դիշերուան ժամը մինչև հինգ տեւեց: Ե-
րևակայեցէք այլևս թէ ի՞նչ եղանք...

* *

Եւբալթուն, Իսանլը, Գարակէօլ Մերանսիոյ և Աե-
սարիոյ միջև գտնուած բոլոր հայ գիւղերը աւարի մատ-
նելէ յետոյ, ահագին բազումութիւն մը քիւրդ, թուրք
և չէրքէզ ցեղերու՝ յարձակեցան վերոյիշեալ երեք
գիւղերու վրայ, կողոպտեցին տուններնս-տեղերնս և
ինչ որ ունէինք անպթօրէն առին տարին:

Գարակէօլ գիւղին վոյս յարձակող Վէօհր-Ալի չէր-
քէզ ձիաւորները այնքան նեղութիւն տուին մեզի, զոր
անկարելի է մարդկօրէն նկարագրել: Պատակ պահած
էք՝ ըսելով՝ կանանց վոյս յարձակել, զանոնք անպատ-
ուել սանձարձակ իրենց բոլոր ամարդութիւնը, գազանու-
թիւնը ի գործ դնել, ո՛հ, չլուսած, չըտեսնուած բաներ ըրին:

Եւբալթունի մէջ հիւրասէր և հարուստ երեւելի հայ
մը՝ կերթայ գրացի թուրք գիւղէ մը անկողին և զգեստ
կը մուրայ այսօր: Մնացեալը կրնաք երևակայել:

Էքրէք և Թօմարչա գիւղերու մէջ մարդու կորուստ
չունինք, իսկ գոյք, կարասիք, ոչխար, արտ և ամեն ինչ
որ ունէինք առին, տարին: Աւարառուները չէրքէզ էին:

ՆԻՆՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Անտրոնական
սնդուկի մէջ ստացւեցան.

Օ. ք-ից Փ. խ. Բ.-ի միջոցաւ 200 ռուբլի, Դ. խ.
200 ռուբլ.:

Արշակունի քաղաքի Աեգրոնական սնդուկին մէջ
ստացւած են.

Շաքէ խ. 285 դահեկան 21 փարա, Կաղին 200
Ֆրանկ, Հով 20 դհ., Կարապետ Մելքոն 40 դհ., Մա-
նուկ 10 դհ., Արագածոտն խ. 80 դհ., Վարդանեան
խ. 20 դհ., Արշալոյս խ. 35 դհ., Փամիսուշտ 10 դհ.,
Յոյս 10 դհ., Յաղթութիւն 10 դհ., Լոյս 20 դհ.,
Մահճակալ 60 դհ., Բաֆֆի խ. 20 դհ., Ծմակ խ.
120 դհ., Ենիչէրի խ. 70 դհ., Ապուպիլճ խ. 30 դհ.,
Կայծակ Կ. Ա. 10 դհ., Կացին Մ. Բ. 10 դհ., Վաս-
պուրահանի Ա. Բ. 50 դհ., Արծիւ խ. 200 դհ.,
Լախա խ. 15 դհ., Ջեփիւռ 12 դհ. 20 փարա, Մա-
թիանեան խ. 30 դհ., Վրայր 20 դհ., Օր. Մառի 10
դհ.:

Ջէյթունի ի նպաստ.—Ջէյթուն խ. 4 օսմ. ոսկի,
Շաւարշի ձեռքով հայր և որդի 240 դհ., Պզտիկ 10
դհ., Գրիչ 30 դհ., Յոյս 40 դհ., Կրակ 20 դհ., Սէր
10 դհ., Վրէժ 10 դհ., Արգոս 35 օսմ. ոսկի, Աղանի
50 դհ., Էլիզա 20 դհ., Ովսաննա 10 դհ., Թագուհի
10 դհ., Գոհար 10 դհ., Իօժէնի 5 դհ., Վիկտորիա
40 դհ., Արձագանք 60 դհ., Մառի 10 դհ., Յիկին
Մանիկ 10 դհ., Կայծ 10 դհ.:

Վիշապ քաղաքի Աեգ. սնդուկի մէջ ստացւած են.

Յառաջադիմասէր 50 դհ., Ս. 2. 20 դհ., Արծիւ
40 դհ., Աղաբեկ 5 դհ., Ջէյթուն 10 դհ., Նւարդ 5
դհ., Ռէլիկ 5 դհ., Եփրատ 40 դհ., Վրէժիմար 20 դհ.,
Կացին 5 օսմ. ոսկի, Արամեան խ. 25 դհ., Սնդիկ 56 դհ.:

Օձէն—Նիւթիչ 270 դհ., Ածուխ 40 դհ., Գնդակ
ներ 104 դհ., Գէորդ 100 դհ., Օձի միջոցաւ Բրուր
քաղաքէն—Հատու 100 դհ., Քանի մը երիտասարդներ
57 դհ. 20 փարա, Պ. Յ. 20 դհ.,

Բողբ. Սթրաշայի հայ պանդուխտներից 100 Ֆրանկ.
Նանսիի երկրագործական վարժարանի Ֆրանսիացի
ուսանողներից 62 Ֆրանկ:

Շվ. ծ. ք. Յ. 10 Ֆր., Օր. Խ. 10 Ֆր., Օր. Յ. 10 Ֆր.:

Ամերիկ. Մատիսոն ք. - Յ. Ն. 5 դոլար, Բոստոն ք.
Վարաժնուների ձեռքով 5 դոլար.

Մի ուսանողական երեկոյթից 550 Ֆրանկ:

Թիւրքմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպ-
ւած ենք մեր նոր հասցէն դարձնել ՊԱՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ՝
որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն:
Խմբագրութեան հետ թղթակցողներից խնդրում է
բացառապէս դիմել այդ նոր հասցէով:

Դաշնակցութեան անձամբներեց. նմուշում է թղթակցութեան
և ներառուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 19, Russel Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: